


ընտանեկան և ժողովրդական երջանկութեան: Տօկիոյում յայտնի է յատկապէս Ճապոնացի քրիստոնեայ և գործիչ Կանզօ Ուչիմուրայ, որ վերջերս հրատարակեց գերմաներէն լեզուով մի «գրքոյի Wie ich ein Christ wurde» (Ինչպէս դարձայ ես քրիստոնեայ), որտեղ նա իր դարձի և նոր կեանքի պատմութիւնն է անում: Իբր զիւղատնտեսական բարձրագոյն դպրոցի ուսանող, «գեռ ֆուքս», նա ազգուէլով իր ընկերների հետ իրենց՝ բնագիտութեան ամերիկացի պրօֆեսորից, ընդունում են քրիստոնէութիւն: Ուչիմուրան հրատարակում է այժմ Տօկիոյում մի կրօնական հանդէս «Ս. Գրոց ուսմունք» վերնագրով, ընտրելով իր համար «pro Christo et patria» նշանաբանը: Երբ ներկայ ուսումնական պատերազմը բռնկուեցու վրայ էր, նա էր որ ուրիշ քչերի հետ հրապարակապէս դիմադրեց պատերազմի ծրագրին: Բայց Ճապոնացիների ծայրայեղ հայրենասիրութիւնը լսեցրեց նրա և նրա նմանների ձայնը:

Արաւելս Արեղեան.



ՃԱՊՈՆԱԿԱՆ ԵՐԵԿՈՆԵՐ

«Ռուս» (Русь) Թերթի № 93 ում «Ճապոնական երեկոյթներ» վերնագրով յօդուածում կարգում ենք հետևեալը. —

Նաբաթական երկու անգամ ինձ մօտ գալիս են Ճապոնացիներէց երկու հոգի: Գրասեղանս ամենաճոխ կերպարանք է ստանում — լցւում է Ճապոնական օրագրերներով, գոյնզգոյն կազմ ունեցող ամսագրերներով, նկարներով և պատկերներով:

Սպասաւորներս դժգոհ են, որ ես ընդունում եմ մեր թշնամիներին. բայց երբ ես պատմեցի այն սրտաշարժ պատմութիւնը, թէ ինչպէս Սարատորին պրաւօսլաւ հաւատ ընդունեց և ամուսնացաւ ռուս օրիորդի հետ, խոհարարուհիս բացականչեց:

— Այ ձեզ գլխից ձեռք քաշածը:

— Ո՞վ.

— Այն օրերորդը, որը դորան է գնացել:

— Ինչո՞վ է նա գլխից ձեռք քաշած:

— Ինչպէ՞ս թէ, միթէ նա չի վախենում, որ ամուսինը նրան կը մորթի:

Դռնապաններս էլ խէթ խէթ են նայում ինձ մօտ եկող ճապօնացիներին:

Նոյն իսկ տասնամեայ աղջիկն էլ է պողահարում: Նրա կարծիքով ես աններելի ռազմագիտական սխալ գործեցի, որ ճապօնացիներին տուաձին անգամ դալուն պէս գերի չը վերցրի:

Բայց այնու ամենայնիւ ես խօսակցեցի այդ երկու երկ-տասարդ ճապօնացիների հետ, որոնք գեղեցիկ համալսարանական կրթութիւն են ստացել և թերթելով ու թարգմանել տալով լրագրական և ամսագիրների միջի յօդուածները, տեսայ որ դրանց մէջ պատկերանում է ինքը՝ ճապօնիան, ճապօնական ճապօնիան:

— Ծանիր զքեզ. (ճանաչիր քեզ). բայց խելացի բան է և ներկայ փիլիսոփայական կանոնը.

— ճանաչի՛ր թշնամուդ:

Ուրեմն աշխատենք ճանաչել ճապօնիան նրա մամուլի միջոցաւ:

Մամուլը ճապօնիայում սուր—զգայուն, ուժեղ և ռամ-կավարական է (ժողովրդական):

Ճապօնիայում ընդորդ գրագէտ են, որովհետեւ գրագիտութիւնը պարտադիր է ամենքի համար: Հէնց որ մանուկը 7 տարեկան դարձաւ, ծնողները պարտաւոր են նրան իսկոյն ժողովրդական դպրոցն ուղարկել:

— Բայց ի՞նչ կլինի, եթէ ուսումնարան չը տանեն:

— Այդ համարեա երբեք չի լինում:

Սովորաբար նոր տարուայ լրագիրները տուաձին համարում լոյս է տեսնում այն մանուկների անուանական ցանկը, որոնց ուսումնարան մտնելու ժամանակն հասել է: Մի և նոյն համարում գետեղուած է լինում և այն անձանց ցուցակը, որոնց զինուորական ծառայութեան ժամանակն է հասել: Այդ երկու պարտաւորութիւններից խուսափելն հաւատարմաբար անպատուարեր ու պախարակելի է: Հայրը պարճենում է, որ նրա զաւակը դպրոց է յաճախում:

— Իսկ եթէ հայրը փող չունի:

— Սկզբնական կրթութիւնը ձրի է, բայց թանկ չէ նաև գիմնազիական (միջնակարգ) և բարձրագոյն՝ համալսարանա-

կան կրթութիւնը: Գոյութիւն ունին որոշ զիւրութիւններ: Մնողներն իրենց կարողութեան համեմատ բաժանուած են երեք դասակարգի: Մի դասակարգի ծնողներին գիմնադիօնը ամսական 25 կոպէկ ուսումնավարձ է ստանում, երկրորդ դասակարգից—40 կոպէկ, իսկ երրորդից—մի ռուբլի... Համալսարանում միջին թուով ուսումնավարձ են ստանում ամսական 4 ռուբլի: Լուսաւորութիւնն հանրամատչելի է և չափազանց էժան: Ահա թէ ինչու է այդքան էժան և մամուլը: Ահա «Արեգակ» կիսամսագիրը, նա տպւում և տարածւում է 200,000 օրինակ, լոյս է տեսնում ամսական երկու անգամ, իւրաքանչիւր համարը բաղկացած է 250—300 երեսից, ունի բաղմամբիւնիւններ, գեղեցիկ արտաքին և արժէ տարեկան միմիայն 3 ռ. 60 կոպէկ: Առանձին համարների գինը 15 կոպէկ է: Ի հարկէ զարմանալի չէ, երբ դուք ամեն տեղ հանդիպում էք այդ կիսամսագիրին: Ահա և համբաւաւոր «Ճապոնիա և Ռուսաստան» թերթը, որի 200 էջից բաղկացած համարը միմիայն 8 կոպէկ արժէ: Ուրեմն ի՞նչ զարմանալի բան է, երբ մեր ջեմերիկաւորներն անգամ (բեռնակիր մշակներ) կարդում են Լեւմոնտովի, Տօլստոյի, Գօրկու և Լէօնիդ Անդրեւի մասին:

— Ի՞նչ էք ասում, զարմացած բացականչեցի ես:

Նա ինձ տուաւ այդ թերթի համարը: Թերթում և մ'նում եմ զարմացած: Բայց, բոլոր դէմքերը ծանօթ են: Գրքի մէջ կան բաղմամբիւն պատկերներ. Բայց ճապոնական բնորոշ դէմքերի շարքում դուք հանդիպում էք ձեզ համար թանկագին դէմքերի՝ Պուշկինի, Տօլստոյի և Լեւմոնտովի պատկերներին, իսկ գրքի մէջ կան յօդուածներ նրանց, ռուսաց դրականութեան, պատմութեան և աշխարհագրութեան մասին:

Բայց մեծապէս ոխալ կլինի, եթէ կարծէք, որ այս՝ յատկապէս Ռուսաստանին նուիրուած թերթումն էք հանդիպում այդ յայտնի դէմքերին և միայն նա է մեզանով հետաքրքրւում: Զրկայ ճապոնական ոչ մի թերթ, որի իւրաքանչիւր համարի 1/3 մասը նուիրուած չլինի Ռուսաստանին: Զրկայ ոչ մի ամսագիր, որի էջերի ճապոնա—չինական նշանադրերի ձեզ համար կախարդական անտառի միջից, չընայէն Գօրկու և Տօլստոյի պատկերները:

Եւ ոչ թէ միայն պատկերներն, այլ ճապոնական նկարիչների անկախ դորժերը, որոնք Ռուսաստանի մեծ գրողին նկարում են իւր գութանի ետեւից գնացող մահկալ:

Գլխակալ քաջում է լծուած ձին, մտադրաւ և դաժան ուղղում է Տօլստոյի իւր գութանը: Նրասանակները գցել է իւր վզից և խորունկ խրուել է այդ խովը ռուսական հողում:

Իսկ ներքևում ճապօնական վերաառույթիւն է և շուրջն էլ ամբողջապէս ճապօնադիր սիւնեակներով լեցուն:

— Այդ Տօլստօյի մասին է:

— Միթէ այդ «Պատերազմ և խաղաղութիւն», «Աննա Կարենին» և «Կրէյցերի Սօնաժան» է:

— Ոչ, ժպտալով պատասխանում է Սարատօրին, — նրա բոլոր վէպերը վաղուց թարգմանուած են, նոյն իսկ «Յարութիւնը» և առանձին առանձին հրատարակուած: Ամապիւրեւում լոյս են տեսնում նրա վիլիսոփայական — աստուածաբանական յօդուածները, նամակները — գլխաւորապէս անգլիական հրատարակութիւններէ:

— Իսկ սօրան ճանաչում էք: — հարցրեց ինձ Սարատօրին և առաւ «Արեգակի» ուրիշ գիրքը — Տակակի:

— Ինչպէ՞ս չէ. դա Գօրկու բնատանիքի նկարն է. ինքն է, իկնը և նրա երկու որդիք: Կազբին էլ նրա առանձնատեմեակի լուսանկարն է: Ես նոյն իսկ Ռուսաստանում չեմ տեսել այդ նկարները:

— Այո՛, դա «Մեշաններ» հեղինակն է:

— Ինչո՞ւ միայն «Մեշաններ», միթէ՞ դա նրա ամենից բնորոշ հեղինակութիւնն է:

— Դա նրա գրուածներէց ամենալաւն է: Ճապօնիայում Գօրկու բոլոր հեղինակութիւններէց դա ամենատարածուածն է, որովհետեւ հեղինակը նրանում ճապօնացիների շատ զգայուն կողմին է դիպել: Մեր հայրենիքում նոյն տարածայնութիւնն է տիրում, ինչ որ Գօրկին շօշափել է «Մեշաններ» աշխատութեան մէջ: Մենք ցայսօր այդ չէինք նկատում, մեր վիպագիրներն այդ նիւթը չէին շօշափել: Բայց երբ ճապօնացիք կարգացին և ապա թատրոնական բեմի վրայ տեսան «Մեշաններին», նրանք հասկացան այն կացութիւնը, որի մէջ գտնւում են ճապօնական հասարակութեան մեշանները:

Մեր վիպագիրներէ մէջ գտնուել են Գօրկուն հետեողներ, որոնք իրենց վէպերի և պատմութիւնների մէջ անալիզի (վերլուծութեան և քննութեան) են ենթարկում այդ տարածայնութեան ձևերն ու պատճառները, որոնք նկարագրում են ճապօնական Բեզսեմենովներին:

— Ինչո՞ւմն է այդ տարածայնութեան էութիւնը:

— Եթէ դուք մանրամասն կերպով ծանօթանաք ճապօնիայի ներկայ կացութեան հետ, այն ժամանակ կը հասկանաք, թէ ինչու Գօրկին մեզ համար թանկ է հէնց իւր Մեշաններով:

Գոյք նրան անուանում էք թափառաշրջիկներ (բօսեակ—բոքիկ) հայր, իսկ մենք—Հայր Մեշաններ:

— Իսկ բօսեակները ձեզ համար անհասկանալի են:

— Այո՛. Այդ երեոյթը դեռ ճապօնական կեանքից դուրս է և մեզ համար անհասկանալի: Այդտեղ շատ բան ուղղակի տարօրինակ է:

— Գօրկու պատկերի շուրջն եղած գրութիւնը նրա մասին է:

— Ո՛ր. Գօրկու ե Տօլստոյի մասին մեր ամսագրերթերում գրուած են շատ ու շատ յօդուածներ..... Ապա Սարատօրին բացատրելով, որ դա Ռուսաստանին վերաբերեալ քաղաքական յօդուած է և գրուած Պրոֆէսօր Ուիսօզիւքօ Միակի ձեռքով, որ աշխատակից է Տօկիօյում հրատարակուող «Նիպօն» թերթի և խմբագիր «Ճապօնացիք» ամսագրի, թարգմանում է այդ հետաքրքիր քաղաքական յօդուածը, որը «Ռուս» թերթն առաջ է բերում իբրեւ վերոյգրեալ յօդուածի շարունակութիւն:



ՀԱՅՈՅ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Է Ս Տ Մ Ո Մ Զ Է Ն Ի

« 20 թ. երբ Աւգոստոսը անձամբ Ասորիք եկաւ և լուրջ ու եռանդուն սկսեց գործել, նրա կամքին հնազանդուել սկսեցին արեւելեան ազգերը: Հայաստանում Արտաշէս թագաւորի դէմ ելաւ մի զօրեղ կուսակցութիւն և ապստամբները դիմեցին հռոմէացիներին խնդրելով թագաւոր կարգել Հայոց Արտաշէսի կրտսեր եղբօր Տիգրանին, որ սնուած էր կայսերական պալատում և այն ժամանակ ասլուում էր հռոմում: Երբ կայսրի խօրթորդին՝ Տիբերիոս կլաւդիոս ներոնը, 22 տարեկան մի երիտասարդ, զօրեղ բանակով Հայաստան մտաւ, Արտաշէս թա-